ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ ԾՁԲ-ՖՖ-01

ք. Երևան « 14 » ապրիլի 2018 թ.

«Հայաստանի Հնարապետության արտաքին գործերի նախարարությունը», ի դեմս Գլխավոր քարտուղար Շահեն Ավագյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Նախարարություն), մի կողմից, և **ԱԺԱՆՍ ՊՅՈՒԲԼԻԿԱ-ԳՐՈՒՊ ԷՍԼ/ՆԵՏՎՈՐԿ**, պարզեցված բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրինության նախագահ՝ Ալեքսանդր ՄԵԴՎԵԴՈՎՍԿԻԻ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գործակալություն), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Նախարարությունը հանձնարարում է, իսկ Գործակալությունը ստանձնում է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XVII գագաթնաժողովի միջոցառումների և Երևան քաղաքի 2800 ամյակին նվիրված համերգի միջոցառումների դիզայնի մշակման, կազմակերպման և իրականացման հարցերով խորհրդատվական և աջակցման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Նախարարության և Գործակալության միջև համաձայնեցված աշխատանքների իրականացման հայեցակարգի և ժամկետների համաձայն՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության պահանջներին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Գործակալության կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Գործակալության գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն, չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Գործակալության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 Գործակալության խնդրանքով նրան փոխանցել պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և տարրերը՝ խորհրդապահական կարգով և պատշաճ ժամկետներում:

2.2.2 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Գործակալությանը:

2.2.3. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Գործակալությանը վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Գործակալությունն իրավունք ունի՝

2.3.1 Նախարարությունից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Նախարարության կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Գործակալությունը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ձեռնարկել քայլեր ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ իր գործունեության հետ կապված պարտավորություններն իրականացնելու համար:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Կատարել իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ բոլոր ապահովագրությունները և, հատկապես, Կազմակերպչի քաղաքացիական պատասխանատվության, դժբախտ պատահարի հավելյալ ապահովագրությունը, որը ծածկում է իր և իր գործակալների և նրա ուղղակի կամ անուղղակի ղեկավարության տակ գտնվող բոլոր անձանց, այսինքն՝ իր վարձու աշխատողների և ենթակապալառուների պատասխանատվությունը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Նախարարության և Գործակալության միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 3) ստորագրմամբ: Ծառայությունը Նախարարությանն հանձնելու փաստը ամրագրվում է Նախարարության և Գործակալության միջև երկկողմ հաստատված փաստաթղթով (հավելված N 3.1)՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Գործակալությունը Նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Նախարարությանն հանձնելու փաստը ամրագրող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Նախարարությունը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Գործակալության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Նախարարությունը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Գործակալությանն է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Նախարարությունը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Նախարարությունը Գործակալությանն է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Գործակալության մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2,120.000 (երկու միլիոն հարյուր քսան հազար) եվրո, որը համարժեք է 1,277,724.000 (մեկ միլիարդ երկու հարյուր յոթանասունյոթ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամի, բայց չի կարող գերազանցել 1,314,400.000 (մեկ միլիարդ երեք հարյուր տասնչորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամը, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Գործակալության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Գործակալությունն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Նախարարությունը՝ նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ Նախարարությունը Գործակալությանը վճարում է կանխավճար հետևյալ համամասնությամբ

- առաջին վճարումը՝ ամբողջ գումարի 30%-ը, այն է՝ 636 000 (վեց հարյուր երեսունվեց հազար) եվրո՝ պայմանագրի ստորագրման պահին,
- երկրորդ վճարումը՝ ամբողջ գումարի 30%-ը, այն է՝ 636 000 (վեց հարյուր երեսունվեց հազար) եվրո՝ 2018թ. հուլիսի 1-ին,
- երրորդ վճարումը՝ ամբողջ գումարի 30%-ը, այն է՝ 636 000 (վեց հարյուր երեսունվեց հազար) եվրո՝ 2018թ. սեպտեմբերի 1-ին,
- չորրորդ վճարումը՝ ամբողջ գումարի՝ 10% այն է՝ 212 000 (երկու հարյուր տասներկու հազար) եվրո՝ 2018թ. հոկտեմբերի 15-ին:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

4.2 Նախարարությունն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Գործակալության բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Գործակալությունը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Գործակալությունից կարող է գանձվել տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Գործակալությունից յուրաքանչյուր ուշացված օրվա համար կարող է գանձվել տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Գործակալությանն վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Նախարարության կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված վճարման ժամկետի խախտման դեպքում Նախարարության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված, բայց դրանից բխող իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Գործակալությունը երաշխավորում է իր, ինչպես նաև իր հնարավոր ենթակապալառուների իրավիճակի օրինականությունը սույն պայմանագրի իրագործման կապակցությամբ, հատկապես Ֆրանսիայի Հանրապետության 1997թ. մարտի 11-ի օրենքի տեսակետից, որը վերաբերում է թաքցված աշխատանքի դեմ պայքարին և հարկային ու սոցիալական հաստատությունների նկատմամբ բոլոր իրավական պարտականություններին:

Այս առումով, Գործակալությունը հաստատում է մասնավորապես, որ սկսելու է օրինական գրանցումները և պարտադիր սոցիալական և հարկային հայտարարագրումները համապատասխան իրավասու մարմինների մոտ, մասնավորապես, սոցիալական ապահովության և հարկային մամիններում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Ֆրանսիայում բնակվող կամ Ֆրանսիայում գրանցված ֆրանսիացի աշխատակիցներին՝ ըստ ֆրանսիական աշխատանքային օրենսգրքի L 324-10, L 143-3 և L 620-3 հոդվածների դրույթների: Նա ստուգելու է նաև, որպեսզի իր հնարավոր ենթակապալառուները կատարեն այս նույն պարտավորությունները:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Գործակալությունը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Նախարարությունն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Գործակալության համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով՝

1) Գործակալությունը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Գործակալությունը գրավոր տեղեկացնում է Նախարարությանը՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Գործակալության կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գործակալությունը: Պայմանագրի կատարման ընթացքում Գործակալությունը որոշակի ծառայությունների համար ենթակապալառուներ ընտրելիս նախապես խորհրդակցում է Նախարարության հետ:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

7.9 Գործակալության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Նախարարությունը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Գործակալությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և ֆրանսերեն, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն Երևան Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ900011018422 ՀՎՀՀ 02527728 Գլխավոր քարտուղար **Շահեն Ավագյան**	**ԱԺԱՆՍ ՊՅՈՒԲԼԻԿՍ-ԳՐՈՒՊ ԷՍԼ/ՆԵՏՎՈՐԿ** ընկերություն, Փարիզ - 75008, Մատինյոն պողոտա 15, Հ/Հ FR7630003033830002006985710 ԱԱՀՀ FR16520515743, տնօրինության նախագահ՝ **Ալեքսանդր ՄԵԴՎԵԴՈՎՍԿԻ**

AGENCE PUBLICS
SAS au capital de 412 500 €
15, Avenue Matignon – 75008 PARIS
Tél. 01 80 96 04 00
SIRET : 520 515 743 RCS PARIS

Հավելված N 1
« 14 » ապրիլի 2018թ. կնքված
ԱԳՆ ԾՁԲ-ՖՖ-01 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/եվրո	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1.	79111200/1	Ֆրանկոֆոնիայի XVII գագաթնաժողովի կազմակերպման խորհրդատվության և աջակցության ծառայություններ՝ աշխատանքների կատարման և աշխատանքների գործառնական ղեկավարման խմբերի կողմից, նախարարության և գործակալության միջև համաձայնեցված հայեցակարգի համաձայն ներառյալ՝ - գագաթնաժողովի անցկացման վայրի տարածքների տեխնիկական պլանների մշակում - մալուխների/կաբելների և անվտանգության գծագրերի մշակում - աշխատանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերի մշակում՝ կապված ձայնային, լուսային, տեսա և հեռախոսային սարքերի, կաբելների, էլեկտրաէներգիայի բաշխման հետ - յուրաքանչյուր առանձնացված տարածքի կահավորման, տեխնիկայով համալրման կարիքների սահմանումը - գագաթնաժողովի հեռուստատեսային հեռարձակման և զանգվածային լրատվամիջոցների տիրույթի աշխատանքների (հանգուցային դոմեն, ինտերնետ,	եվրո	2.120.000	1	Երևան Վ.Սարգսյան 3	ապրիլ 2018 -31 հոկտեմբեր 2018

		կաբելային միացումներ) տեխնիկական բնութագրերի մշակում - ուղեցուցային նշանների մշակում՝ ձևաչափի և տեղակայման կետերի սահմանում, անհրաժեշտ աշխատանքների կատարում - մասնակցություն գագաթնաժողովի նախապատրաստման և իրականացման համար ժողովների համակարգմանը - ընդհանուր տեխնիկական համակարգում - տեխնիկական խմբերի ղեկավարում, - լոկալ խմբերի ղեկավարում - մատակարարների, ինչպես նաև ոլորտի բոլոր աշխատանքային խմբերի մատուցած ծառայությունների համակարգումը, - մոնտաժման, շահագործման, ապամոնտաժման աշխատանքների համակարգում, - ծառայությունների պատշաճ իրականացման երաշխավորում պայմանագրի շրջանակում - տեխնիկական խմբերի և տեղում իրականացվող աշխատանքների համակարգում - տեղական և միջազգային մատակարարների խորհրդատվություն Երևանի 2800 ամյակի և Ֆրանկոֆոնիայի XVII գագաթնաժողովի համերգների կազմակերպման ծառայություններ, ներառյալ. - 30մx20մ չափերով շերտապատված համերգային բեմի տեղադրում և դրա պահպանում Հանրապետության Հրապարակում մինչև Ֆրանկոֆոնիայի Գագաթնաժողովի համերգը - Բեմի համար անհրաժեշտ կառուցվածքների և այլ սարքերի՝ էկրանի, ձայնային, լուսային և այլ սարքավորոտմների տեղադրում - միջազգային ստանդարտներին համապատասխանող համակողմանի ձայնային համակարգի տեղադրում Հանրապետության հրապարակի ողջ տարածքում ձայնն ապահովելու համար					

		- Բեմում արտիստների ներկայացրած տեխնիկական բնութագրերին համապատասխանող ձայնի անդրադաձման համակարգի տեղադրում - Բեմում մեծաթիվ հանդիսատեսով համերգների համար նախատեսված և արտիստներ ՝ ներկայացրած տեխնիկական պահանջներին համապատասխանող լուսային համակարգի տեղադրում 5,62/6,75 չափսերով 2 տեսաէկրանների տեղադրում Հանրապետության Հրապարակի ողջ հատվածում ներկա գտնվող հանդիսատեսի համար համերգի տեսանելիությունն ապահովելու նպատակով - անհրաժեշտ մալուխների/կաբելների տեղադրում - անհրաժեշտ սարքերի տեղափոխում - տեխնիկական, օպերատորական, ինժեներներական աշխատանքների իրականացում - մոնտաժման, շահագործման, ապամոնտաժման աշխատանքների իրականացում - տեղադրված ձայնային և լուսային սարքավորումների անխափան աշխատանքի ապահովում տեխնիկական խմբերի լոգիստիկ ապահովում՝ տրանսպորտ, սնունդ, հյուրանոց Գագաթնաժողովի հանդիսավոր բացման արարողության իրականացման ծառայություններ, ներառյալ - Պետությունների և պատվիրակությունների ղեկավարների համար 90 տեղանոց օթյակի դիզայն և պատրաստում - առնվազն 8մx30մ չափի ԼԵԴ տիպի էկրանի տեղադրում բեմի ողջ բացվածով և տրիբունայի վերևում - Օթյակի դիմաց ԼԵԴ էկրանին համաչափ հեռարձակման էկրանի տեղադրում՝ բեմում գտնվող պետությունների և պատվիրակությունների ղեկավարների համար տեսանելիություն ապահովելու նպատակով - Տեսաընդունում՝ բացման արարողության ֆիլմի և ընդմիջող տեսաշարերի, տեսաձայնային հոլովակների պատրաստում - Ընդմիջող տեսաշարերերի հայեցակարգի մշակում,					

		գեղարվեստական ցուցադրում և բեմականացում - Սրահի լուսային և հնչյունային տեխնիկական միջոցների հավելում այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, - բացման արարողության տեխնիկական ղեկավարում և իրականացում - տեխնիկական խմբերի լոգիստիկ ապահովում՝ տրանսպորտ, սնունդ, հյուրանոց Լիագումար նիստերի դահլիճի աշխատանքների ապահովման ծառայություններ, ներառյալ - անհրաժեշտ կահավորանք՝ աթոռներ և սեղաններ - «Գագաթնաժողովի» սեղանի ապահովում - Գագաթնաժողովի տարբերանշանի պատրաստում և տեղադրում - Սրահի ձևավորում ուղղահայաց պաստառներով - վերահեռարձակման էկրաններ տեսադիտման համակարգով և վերահեռարձակման կազմակերպում - Կառավարման խցիկ՝ տեսահեռարձակող էկրանի և սեղանի երկայնքով տեղադրված պլազմային էկրանների համար - Սրահի լուսային և հնչյունային տեխնիկական միջոցների հավելում այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, - տեխնիկական խմբերի լոգիստիկ ապահովում՝ տրանսպորտ, սնունդ, հյուրանոց Լրատվական կենտրոնի աշխատանքների ապահովման ծառայություններ, ներառյալ՝ - 30մ x 55մ չափի վրան՝ Երկթև կարկասով և անթափանց ծածկույթով, հատակի և պատերի կառուցում, հատակի ծածկապատում, վրանը պահող ծանրոցների տեղադրում - Հակահրդեհային անվտանգության միջոցներ - Օդափոխիչ համակարգեր՝ 6000 բրիտանական ջերմային միավոր - Երկփեղկ դռներ/թեքահարթակներ - Վերամբարձ սարքեր - մոնտաժման, շահագործման, ապամոնտաժման աշխատանքների իրականացում					

		ապահովագրություն/վերահսկման գրասենյակ - անհրաժեշտ փոխադրամիջոցների ապահովում Լրատվական կենտրոնի տեխնիկական համալրումը, ձևավորումը և տարածքների բաշխում, ներառյալ՝ - տարածքների միջնապատում և գրասենյակների ստեղծում, մեդիա ստուդիաների, մամուլի սրահի, աշխատանքային սրահի, հանգստի գոտու, արագ սննդի կետի տեղադրում - պատերի ձայնամեկուսացում և որոշ գրասենյակների/ստուդիաների արևապատշպան տանիքային ծածկերի տեղադրում - Ընդունարանի կահույքի ապահովում և արագ սննդի կետի տեղադրում - Գրասենյակային և սրահների դռներ - ուղեցուցային նշանների, լրատվական կանգուն պաստառների պատրաստում - հատակների խավապատում, - մոնտաժման, շահագործման, ապամոնտաժման աշխատանքների իրականացում - անհրաժեշտ կահույքի ապահովում՝ սեղաններ, աթոռներ, բազմոցային անկյուն, բոլոր գրասենյակներում կանգնած ուտելու համար բարձր սեղաններ - անհրաժեշտ լուսավորության ապահովում՝ սարքավորումների և եռավարդակ երկարացման լարերի ապահովում - 6/8 երկտեղանոց սանհանգույցների տեղադրում և պրոֆիլակտիկ վերահսկում - տեխնիկական խմբերի լոգիստիկ ապահովում՝ տրանսպորտ, սնունդ, հյուրանոց Սննդի սպասարկման անձնակազմի համար վրանի պատրաստման ծառայություն, ներառյալ՝ : - 30մ x 25մ չափի վրան Երկթև կարկասային կառույց՝ անթափանց ծածկույթով - Հատակի և պատերի կառուցում - Հատակի ծածկապատում, վրանը պահող ծանրոցների					

		տեղադրում - Հակահրդեհային ազդանշանային և անվտանգության միջոցների ապահովում - Օդափոխիչ համակարգեր՝ 6000 բրիտանական ջերմային միավոր - Երկփեղկ դռներ/թեքահարթակներ - Վերամբարձ սարքեր - Մոնտաժավորման, շահագործման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում - Ապահովագրություն/վերահսկման գրասենյակ - Տրանսպորտ - անհրաժեշտ կահույք՝ ծալովի սեղաններ, նստարաններ - տեխնիկական խմբերի լոգիստիկ ապահովում՝ տրանսպորտ, սնունդ, հյուրանոց Երկու համերգների նկարահանում և դրա համար անհրաժեշտ հատուկ տեխնիկական միջոցների տրամադրում - 2018թ. սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 11-ին կայանալիք երկու համերգների համար HD որակով հեռարձակման հեռուստատեսային ազդանշանի տրամադրում Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը, իսկ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովին նվիրված համերգի դեպքում՝ TV5 Monde հեռուստաընկերությանը, ինչպես նաև այլ հեռարձակողների ազդանշանի տրամադրման համար անհրաժեշտ HD հեռուստատեսային հեռարձակման միջոցների՝ ձայնային հեռուստատեսության հատուկ նկարահանող սարքի, շարժական հեռուստակայանի և 9-12 կադրերով նկարահանում ապահովող սարքավորումների, 2 «Stiadican» նոութբուքի, «Luma» կռունկ-տեսախցիկի, ռելսային տեսախցիկի, բեմի առաջնամասի և 5 ֆիքսված երկար տեսախցիկների ապահովում - 2018թ. հոկտեմբերի 11-ի Գագաթնաժողովի բացման հանդիսավոր արարողության նկարահանում և HD որակով հեռարձակման հեռուստատեսային ազդանշանի					

		տրամադրում Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը, ինչպես նաև TV5 Monde հեռուստաընկերությանը և այլ հեռարձակողների, - Գագաթնաժողովի լիագումար նիստի ձայնագրում և դրա համար անհրաժեշտ հատուկ տեխնիկական միջոցների տրամադրում:					
		Ընդամենը		2,120.000			

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

AGENCE PUBLICS
SAS au capital de 412 500 €
15, Avenue Matignon – 75008 PARIS
Tél : 01 80 96 04 00
SIRET : 520 515 743 RCS PARIS

Հավելված N 2
« 14 » ապրիլի 2018թ. կնքված
ԱԳՆ ԾՁԲ-ՖՖ-01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Եվրո

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	79111200/1	Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XVII գագաթնաժողովի միջոցառումների և Երևան քաղաքի 2800 ամյակին նվիրված համերգի միջոցառումների դիզայնի մշակման, կազմակերպման և իրականացման հարցերով խորհրդատվական և աջակցման ծառայություններ	-	-	-	636000	636000	636000	1272000	1272000	1908000	2120000	2120000	2120000	2,120.000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

AGENCE PUBLICS
SAS au capital de 412 500 €
15, Avenue Matignon – 75008 PARIS
Tél. : 33 1 80 96 04 00
SIRET : 520 315 743 RCS PARIS

Հավելված 3
« » _____ 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն պայմանագրի դրությունները հասանելի չեն եղել կողմերի և նրանց իրավահաջորդների համար մինչև դրանց ստորագրումը:

Գործարքի Ընդունող կողմ

_____

ստորագրություն

Գործարքի Ուղարկող կողմ

_____

ստորագրություն

Կ.Տ.

ազգանուն, անուն, հայրանուն

Կ.Տ.

ազգանուն, անուն, հայրանուն

Սույն պայմանագրի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գործարքի կողմերի կողմից ստորագրված ամսաթիվը համարվում է գործարքի կնքման օր:

Հավելված 3.1
« » _____ 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Նախարարությանն հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Նախարարություն) և _____-ի
Նախարարության անունը Գործակալության անունը

(այսուհետ՝ Գործակալություն) միջև 2018 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Գործակալությունը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Նախարարությանն հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն